ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
15 հոկտեմբերի 2024 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 52 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Լևոն Հովհաննիսյանը, Սուրեն Գրիգորյանը, Սարգիս Մադաթյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Շավարշ Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղարի տեղակալ Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Աշոտ Շահբազյանը, Կամո Արեյանը և Սոնա Թևանյանը, քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչության պետ Արկադի Թեմուրյանը, մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետի պաշտոնակատար Սևակ Մելքոնյանը և քարտուղարության պետ Լիլիթ Յավրյանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի հերթական նիստը գումարել 2024 թվականի նոյեմբերի 19-ին, ժամը 10.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – Կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Առաջարկն ընդունվեց միաձայն:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ համաձայն Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության կողմից ներկայացված տեղեկատվության՝ խմբակցության ղեկավար է ընտրվել Արամ Թորոսյանը:

Տիգրան Ավինյանը հայտնեց, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 11-ի արձանագրության՝ Երևանի ավագանու Հանրային Ձայն կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամների մանդատները տրվել են Հանրային Ձայն կուսակցության ընտրական ցուցակի նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուներ՝ Լուսինե Բուղայանին և Դիաննա Ալեքյանին: Դիաննա Ալեքյանն իր դիմումի համաձայն դուրս է եկել Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության կազմից՝ պահպանելով ավագանու անդամի իր լիազորությունները:

Երևանի ավագանու Ազգային Առաջընթաց կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է Ազգային Առաջընթաց կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Վահագն Իսոյանին: Վահագն Իսոյանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 20-ի հ.17 արձանագրության՝ լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է Ազգային Առաջընթաց կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Մուշեղ Հակոբյանին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 15-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 20 հարց, որից 2-15-րդ հարցերը չզեկուցվող են.

1. Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գուրգեն Մուշեղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
3. Դավիթ Սեդրակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
4. Արտաշես Հովսեփյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
5. Սուրեն Օսիպյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
6. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի N 242-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
7. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

8. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
9. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
10. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
11. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
12. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
13. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
14. Գույք նվիրաբերելու մասին: (Չզեկուցվող)
15. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի 50-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Չզեկուցվող)
16. Արմեն Սամվելի Խանդիկյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին: (Զեկուցվող)
17. Բարսեղ Ռոբերտի Թումանյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին: (Զեկուցվող)
18. Լևոն Հրաչի Թոքմաջյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին: (Զեկուցվող)
19. Հենրիկ Անտոնի Էդոյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին: (Զեկուցվող)
20. Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին: (Զեկուցվող)

Ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը:

Երևանի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 15-ի հերթական նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ ելույթով հանդես եկան Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը:

Արամ Թորոսյանն առաջարկեց օրակարգի նախագծից հանել «Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» (Արաբկիր վարչական շրջան, Օրբելի փ. 23, 27, 29 հասցեներ) նախագիծը և օրակարգի նախագծում ընդգրկված բոլոր հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ օրակարգի չզեկուցվող՝ 7-րդ, 8-րդ և 9-րդ, 10-րդ և 12-րդ հարցերի («Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» ավագանու

որոշումների նախագծեր, հասցեներ՝ Շենգավիթ վարչական շրջանի Գ. Նժդեհի փողոց հ. 15/1 հասցե, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Թբիլիսյան խճ. հ.20/20 հասցե, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Դ. Անհաղթի փ. 4/20, 4/21 և Կ. Ուլնեցու փ. 43/5 հասցեներ, Նոր Նորք վարչական շրջան Մոլդովական փողոց 47/1 հասցե, Արաբկիր վարչական շրջան, Օրբելի փ. 23, 27, 29 հասցեներ) վերաբերյալ գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն և նշված հարցերը հանում է քննարկումից:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ քվեարկության է դրվում Երևանի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 15-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գուրգեն Մուշեղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
3. Դավիթ Սեդրակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
4. Արտաշես Հովսեփյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
5. Սուրեն Օսիպյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
6. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի N 242-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
7. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
8. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
9. Գույք նվիրաբերելու մասին: (Չզեկուցվող)
10. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի 50-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Չզեկուցվող)
11. Արմեն Սամվելի Խանդիկյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին: (Զեկուցվող)
12. Բարսեղ Ռոբերտի Թումանյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին: (Զեկուցվող)
13. Լևոն Հրաչի Թոքմաջյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին: (Զեկուցվող)
14. Հենրիկ Անտոնի Էդոյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին: (Զեկուցվող)
15. Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին: (Զեկուցվող)

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 34, դեմ՝ 22, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 10-րդ հարցերը:

Տ. Ավինյանը տեղեկացրեց, որ 2-ից 7-րդ և 9-րդ, 10-րդ չզեկուցվող հարցերի վերաբերյալ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովների կողմից տրվել են դրական եզրակացություններ: Օրակարգի նախագծի չզեկուցվող 8-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցի վերաբերյալ գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

2. Գուրգեն Մուշեղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ակադեմիկոս Գուրգեն Ներսեսի Մուշեղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Եզնիկ Կողբացու 42 շենքի 2-րդ մուտքի պատին փակցնելու համար:

3. Դավիթ Սեդրակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն հայ ականավոր գիտնական, աստղաֆիզիկոս Դավիթ Սեդրակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հանրապետության փողոցի հ.82Բ հասցեում փակցնելու համար:

4. Արտաշես Հովսեփյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն Հայաստանի ժողովրդական նկարիչ, քանդակագործ Արտաշես Հովսեփյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Գյուլբենկյան փողոցի հ.33 հասցեում փակցնելու համար:

5. Սուրեն Օսիպյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Օսիպյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոցի հ.8 հասցեում փակցնելու համար:

6. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի N 242-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի «Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, ժամկետները, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները սահմանելու մասին» N 242-Ն որոշման հավելվածի 20-րդ կետի ցանկի 27-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

7. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արարատյան փողոց հ.84 հասցեում արտադրական նշանակության շինության կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

8. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի.

ա) «Կոմունալ տնտեսության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Կոմունալ տնտեսության վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	1	561,000		561,000
3	էներգետիկ տեղեկատվության հավաքագրման և կատարման պատասխանատու	1	282,200		282,200
4	էներգետիկ տվյալների մոնիթորինգի մասնագետ	1	272,000		272,000
5	գործավար	1	248,200		248,200
-	**Աղբահանության և սանմաքրման բաժին**				
6	բաժնի պետ	1	408,000		408,000
7	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
8	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
9	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
-	**Կենսաապահովման բաժին**				
10	բաժնի պետ	1	408,000		408,000
11	գլխավոր մասնագետ	3	289,000		867,000
12	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
13	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
-	**Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների բաժին**				
14	բաժնի պետ	1	408,000		408,000
15	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
16	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
17	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**27.0**			**8,632,600**

».

բ) «Լրատվության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Լրատվության վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	1	561,000		561,000
3	գլխավոր մասնագետ	2	357,000		714,000
4	լրագրող	1	357,000		357,000

5	լուսանկարիչ	1	357,000		357,000
6	Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի թարգմանիչ	1	357,000		357,000
7	սոցիալական մեդիայի համակարգող	1	323,000		323,000
8	Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի պատասխանատու քարտուղար	1	289,000		289,000
9	մոնտաժող	2	282,200		564,400
10	օպերատոր	2	282,200		564,400
11	լուսանկարիչ	1	282,200		282,200
12	Վիզուալ և գրաֆիկական էֆեկտների մասնագետ	1	282,200		282,200
13	Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի բովանդակության կառավարիչ	1	272,000		272,000
14	Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի խմբագիր-սրբագրիչ	1	272,000		272,000
15	Գրաֆիկ դիզայներ	1	272,000		272,000
16	Ձայնային մոնտաժող	1	272,000		272,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**19.0**			**6,436,200**

».

գ) «2. Քարտուղարություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Քարտուղարություն				
1	քարտուղարության պետ	1	697,000		697,000
2	քարտուղարության պետի տեղակալ	1	561,000		561,000
3	գլխավոր մասնագետ	5	323,000		1,615,000
4	առաջատար մասնագետ	2	289,000		578,000
5	գործավար	5	248,200		1,241,000
	Ընդհանուր բաժին				
6	բաժնի պետ	1	408,000		408,000
7	գլխավոր մասնագետ	5	289,000		1,445,000
8	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
9	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000

	Քաղաքացիների սպասարկման բաժին				
10	բաժնի պետ	1	408,000		408,000
11	գլխավոր մասնագետ	7	289,000		2,023,000
12	առաջատար մասնագետ	11	282,200		3,104,200
13	առաջին կարգի մասնագետ	4	272,000		1,088,000
14	քաղաքացիական կացության ակտերի գրանցման սպասարկման կենտրոնի առաջին կարգի մասնագետ	17	132,300		2,249,100
	Զանգերի սպասարկման և աջակցման բաժին				
15	բաժնի պետ	1	408,000		408,000
16	գլխավոր մասնագետ	4	289,000		1,156,000
17	առաջատար մասնագետ	11	282,200		3,104,200
18	առաջին կարգի մասնագետ	5	272,000		1,360,000
	Արխիվային գործի վարման բաժին				
19	բաժնի պետ	1	408,000		408,000
20	գլխավոր մասնագետ-գլխավոր արխիվագետ	1	289,000	34,680	323,680
21	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
22	առաջին կարգի մասնագետ	3	272,000		816,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**90.0**			**24,101,580**

».

դ) «Մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	1	561,000		561,000
3	գլխավոր մասնագետ	1	323,000		323,000
4	առաջատար մասնագետ	1	289,000		289,000
5	առաջին կարգի մասնագետ	2	282,200		564,400
6	պահեստի պատասխանատու	2	289,000		578,000
7	վարորդ	1	289,000		289,000
8	վարորդ	8	272,000		2,176,000

9	վարորդ	35	255,000		8,925,000
10	տեխնիկական սպասարկող	1	255,000		255,000
11	բանվոր	2	255,000		510,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**55.0**			**15,167,400**

».

2) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «3. Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմեր» գլխի «3.9. Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» ենթագլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

3.9	**Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ**				
1	վարչական շրջանի ղեկավար	1	850,000		850,000
2	վարչական շրջանի ղեկավարի օգնական	1	323,000		323,000
3	վարչական շրջանի ղեկավարի տեղակալ	1	714,000		714,000
4	աշխատակազմի քարտուղար	1	697,000		697,000
5	գլխավոր մասնագետ-իրավաբան	1	323,000		323,000
6	գլխավոր մասնագետ	1	323,000		323,000
7	գլխավոր մասնագետ-մարդկային ռեսուրսների կառավարման գծով	1	289,000		289,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**7.0**			**3,519,000**
-	**Առևտրի, ծառայությունների և գովազդի բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
2	գլխավոր մասնագետ	1	289,000		289,000
3	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
	ԸՆԴԱՄԵՆԸ	**3.0**			**958,800**
-	**Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
2	գլխավոր մասնագետ	1	289,000		289,000
3	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
4	առաջին կարգի մասնագետ	3	272,000		816,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**6.0**			**1,774,800**
-	**Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
	գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	1	289,000		289,000
	գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
2	առաջատար մասնագետ	1	282,200		282,200

	ԸՆԴԱՄԵՆԸ	**4.0**			**1,247,800**
-	**Ընդհանուր բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
2	գլխավոր մասնագետ	1	289,000		289,000
3	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
	ԸՆԴԱՄԵՆԸ	**3.0**			**958,800**
-	**Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
2	գլխավոր մասնագետ	1	289,000		289,000
3	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
4	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**5.0**			**1,513,000**
-	**Կրթության, մշակույթի և սպորտի բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
2	գլխավոր մասնագետ	1	289,000		289,000
3	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**3.0**			**948,600**
-	**Տեխնիկական սպասարկման անձնակազմ**				
1	տնտեսվար	1	370,600		370,600
2	պարետ	1	241,400		241,400
3	համակարգչային տեխնիկայի օպերատոր-գործավար	1	258,400		258,400
4	համակարգչային տեխնիկայի օպերատոր-գործավար	2	210,800		421,600
5	համակարգչային տեխնիկայի սպասարկող	1	210,800		210,800
6	վարորդ	1	265,200		265,200
7	վարորդ	1	255,000		255,000
8	պահակ	4	176,800		707,200
9	բանվոր	1	176,800		176,800
10	տեխնիկական աշխատող	2	200,000		400,000
11	հավաքարար	2	176,800		353,600
	ԸՆԴԱՄԵՆԸ	**17.0**			**3,660,600**
-	**Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
2	գլխավոր մասնագետ	1	289,000		289,000
3	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
	ԸՆԴԱՄԵՆԸ	**3.0**			**958,800**
-	**Ֆինանսական բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600

2	գլխավոր մասնագետ	1	289,000		289,000
3	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
4	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**4.0**			**1,230,800**
	ԱՄԲՈՂՋԸ	**55.0**			**16,771,000**

».

3) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «775.0» և «259,270,045» թվերը փոխարինել համապատասխանաբար «784.0» և «262,034,245» թվերով.

4) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ վարչական շրջաններ» տողում «1458.0» և «407,649,400» թվերը փոխարինել համապատասխանաբար «1459.0» և «407,931,600» թվերով, իսկ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1528.0» և «429,637,200» թվերը՝ համապատասխանաբար «1529.0» և «429,919,400» թվերով.

5) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2303.0» և «688,907,245» թվերը փոխարինել համապատասխանաբար «2313.0» և «691,953,645» թվերով:

2. Սույն որոշումը համայնքային ծառայության հաստիքների մասով ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

9. Գույք նվիրաբերելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան համայնքի սեփականություն համարվող թվով 85 էլեկտրաշչակները, ընդհանուր, 11,927,917.20 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով, նվիրաբերել Տավուշի մարզի Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան և Բերդ խոշորացված համայնքներին բնակչության ազդարարման համակարգը բարելավելու նպատակով՝ համաձայն հավելվածի:

2.Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ Տավուշի մարզի Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան և Բերդ խոշորացված համայնքների հետ կնքել նվիրաբերության պայմանագրեր:

10. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի 50-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2024 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N 50-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ գլուխի աղյուսակը լրացնել նոր՝ 21-31-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 32, դեմ՝ 17, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2024 թվականի հոկտեմբերի 15-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

11. ԼՍԵՑԻՆ – Արմեն Սամվելի Խանդիկյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Արմեն Սամվելի Խանդիկյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար
2. Հայկ Գրիգորյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Մանուկ Սուքիասյան– Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
2. Մեսրոպ Մանուկյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Սուսաննա Մելիքյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի 2806-րդ տարեդարձի առթիվ, Երևան քաղաքի արվեստի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար բեմադրիչ, ՀՀ ժողովրդական արտիստ Արմեն Սամվելի Խանդիկյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

12. ԼՍԵՑԻՆ – Բարսեղ Ռոբերտի Թումանյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Բարսեղ Ռոբերտի Թումանյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Արշակ Սարգսյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Լուսինե Գևորգյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
3. Սեդա Տեր-Մինասյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
4. Սամվել Հարոյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի 2806-րդ տարեդարձի առթիվ, Երևան քաղաքի արվեստի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար օպերային երգիչ, ՀՀ ժողովրդական արտիստ Բարսեղ Ռոբերտի Թումանյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

13. ԼՍԵՑԻՆ – Լևոն Հրաչի Թոքմաջյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Լևոն Հրաչի Թոքմաջյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1.Մեսրոպ Մանուկյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

2. Արամ Թորոսյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սեդա Տեր-Մինասյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի 2806-րդ տարեդարձի առթիվ, Երևան քաղաքի արվեստի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար քանդակագործ, ակադեմիկոս, ՀՀ ժողովրդական նկարիչ Լևոն Հրաչի Թոքմաջյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

14. ԼՍԵՑԻՆ – Հենրիկ Անտոնի Էդոյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Հենրիկ Անտոնի Էդոյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Մեսրոպ Մանուկյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի 2806-րդ տարեդարձի առթիվ, հայ գրականության զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար բանաստեղծ, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Հենրիկ Անտոնի Էդոյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 50, դեմ՝ 4, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

15. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին**:**

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Մանուկ Սուքիասյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան -Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար
2. Հայկ Գրիգորյան -Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
3. Արամ Թորոսյան -Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար
4. Մանուկ Սուքիասյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
5. Լուսինե Գևորգյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
6. Սամվել Հակոբյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Համաձայն Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանի պահանջով հայտարարվեց մինչև տասնհինգ րոպե ընդմիջում:

Նիստը վերսկսվեց ժամը 12.05-ին:

Արտահերթ ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը, «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և «Ազգային առաջընթաց» խմբակցության» ղեկավար Արամ Թորոսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սույն որոշման 2-րդ կետում նշված անձանց Երևան քաղաքում սեփականության իրավունքով պատկանող և անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունների և փոխադրամիջոցի գույքահարկի գծով սահմանել արտոնություն՝ ազատելով հաշվարկված առկա հարկային պարտավորությունների և հաշվարկված տույժի վճարումից 4670287 (չորս միլիոն վեց հարյուր յոթանասուն հազար երկու հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի և դրանց մասով անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցի գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից կատարել վճարում:

2. Սույն որոշմամբ սահմանված արտոնությունները կիրառվում են հետևյալ քաղաքացիների խմբերի նկատմամբ.

1) Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով զոհված, վիրավորված և ստացած վնասվածքներից հաջորդող տարիների ընթացքում մահացածների ընտանիքների անդամներ,

2) Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) և Հայաստանի Հանրապետության պատերազմների 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամներ, որոնք անշարժ գույքի հարկով և (կամ) փոխադրամիջոցի գույքահարկով հարկման օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունը և (կամ) փոխադրամիջոցը ձեռք են բերել մինչև Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 690-Ն որոշումն ուժի մեջ մտնելը,

3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով գերեվարված, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված (կամ նրանց ընտանիքի անդամներին) անձինք:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմեց
Ն. Ղուկասյանը